



ՊԼԵՆՌԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՉԱՆ

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Հեռախոս. 818-241-3111 • Փաքս. 818-548-9041

Ապրիլի 1, 2020 թվական

Գլենդելի հանրային դպրոցների հարգելի աշակերտներ, անձնակազմ, ընտանիքներ և համայնք,

Շնորհակալություն ձեր համբերության և համագործակցության համար այն ժամանակ, երբ մենք այս շաբաթ անցում ենք կատարում դասատենյակներում անցկացվող մեր ավանդական ուսուցման տարբերակից դեպի հեռավար տարբերակը: Մեր ուսուցիչներն ու աշխատակիցները համագործակցում են միմյանց հետ, որպեսզի այս տարբերակով ուսուցումը շարունակաբար բարելավելու նպատակով լավագույն գործառնություններ փոխանակեն և միջոցներ մշակեն: Մենք ամեն օր նոր նյութեր ենք ավելացնում մեր Տեղեկատվական կենտրոնում www.gusd.net/remoteteaching կայքում, և մենք աշխատում ենք արագորեն պատասխանել ձեր բոլոր հարցերին: Հաճախ տրվող հարցերի պատասխանները կարող եք գտնել Տեղեկատվական կենտրոնում:

Կրթական խորհուրդը և մեր կրթաշրջանի ղեկավարությունը պարտավորվում են ապահովել Գլենդելի հանրային դպրոցների կազմում ընգրկված մեր ամբողջ համայնքի առողջությունն ու անվտանգությունը: Հիմնվելով նահանգային և տեղական առողջապահության և կրթության մարմինների՝ առաջարկությունների վրա, **մենք որոշում ենք կայացրել երկարաձգել հեռավար ուսուցումը մինչև 2019-20 ուսումնական տարվա ավարտը:**

Մենք ավարտական և տարեվերջյան տոնակատարությունների վերաբերյալ շատ տարբերակներ ենք դիտարկում: Մենք գիտակցում ենք կյանքի այս նշանակալի իրադարձությունների կարևորությունը, հատկապես մեր ավարտական աշակերտների համար, և մենք սերտորեն կհամագործակցենք մեր աշակերտների, անձնակազմի և ընտանիքների հետ, որպեսզի այս փորձառությունները հնարավորինս իմաստալից դարձնենք մեր զարմանահրաշ աշակերտների համար:

Սննդի ծառայության մեր բաժինը երկուշաբթից ուրբաթ օրերին կշարունակի աշակերտների համար նախաճաշ և ճաշ մատուցել «սնունդը վերցնել և գնալ» վայրերում մինչև դպրոցները կվերաբացվեն: Այդ վայրերը տեսնելու և լրացուցիչ տեղեկություն ստանալու համար այցելեք www.gusd.net/meals կայքը:

Մենք շարունակում ենք աջակցել մեր աշակերտներին, որպեսզի շարունակեն իրենց կրթությունը, իսկ մեր ամենախիստ կարիքավոր ընտանիքները ստանան առողջ սնունդ և անհրաժեշտության մատչելիություն, այն ժամանակ, երբ մեր դպրոցները փակ են: Նորություններ ունենալու դեպքում՝ մենք կշարունակենք մեր համայնքին տեղեկացված պահել: Մենք գնահատում ենք ձեր աջակցությունն ու համբերությունը այն ժամանակ, երբ միասին անցնում ենք այս եզակի ճանապարհով:

Հարգանքներով՝

Դկտր. Վիվյան Էքշյան
Դպրոցների գերատեսուչ